

## ՍԱՀՄԱՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ

Գյումրիից Կարս չօգտագործվելուց ժանգոտող նրկաթգծի պաստառի նրկարությունը մոտ 80 կիլոմետր է, բայց մենք Կարս գնում ենք Վրաստանով: Առաջմ սա է իրավիճակը, ի՞նչ Կարող ենք անել:

Վրաստանի Ախալցխայի անցակետից Կարս ճանապարհի վերնլիքի վերջին կետը գտնվում է ծովի մակերևույթից 2410 մետր բարձրության վրա: Մեր զարմանքը ոչ այնքան այդ բարձունքում մեր լինելն էր կամ այդտեղից մեր պատճենական նրկի մի հատվածի լայնարձակ տարածքի նրեալը, որքան այն, թե այդ բարձրության վրա ինչ ջանադրությամբ են տարվում անտառնկման աշխատանքներ: Ճանապարհի եզրներին, մի քանի կիլոմետրի վրա տարածված է հսկա անտառաշերտը՝ խորում սոճուտ, եզրներին՝ եղևնուտ: ԽՍՀՄ ղեկավարներից այն ո՞ր մեկն էր, որ սրանից մոտ 40 տարի առաջ, Թուրքիա իր այցելության ժամանակ, հայտարարեց, թե այդ նրկի հետ սահմանային վեճնը այլևս չկան: Հենց այնպես, ձեռքի հետ դա էլ ասաց՝ Միության մաս հանդիսացող Հայաստանի էլ, Վրաստանի էլ կարծիքներն հարցնելու կարիքը բնակ չունենալով: Խորհրդային տարիներին դա »ընդունված կարգ« էր՝ Մոսկվան էր որոշողը: Ահա հենց այդ տարիներին էլ մեծ թափով սկսվեցին Թուրքիայի սահմանամերձ բնակավայրերի հսկայածավալ կառուցապատումն ու բնակիչների վերաբնակեցումը, վերջիններիս հոգսնի թերթացման հազար ու մի միջոցների ներդրումը:

Այս անտառների գոյությունն էլ նոյն տարիքի է, անտառներ, որ այդ բարձրության վրա ոչ միայն գեղեցիկ գոտուորում են լեռկ լեռները, այլև կլիմայական բարենապաստ միջավայր ստեղծում, ձմեռային պայմաններում էլ ճանապարհը ազատ պահում ձյան կուտակումներից: Ես հիշեցի, թե ինչպես անցյալ դարի 80-ական թվականներին Հայաստանի անտառնտեսության պետ Հրանտ Ավագյանը Թալինի շրջանում անտառնտեսություն հիմնելու մի հոյակապ ծրագիր էր՝ Մշակել, որն, ավաղ, այդպես էլ սոսկ ծրագիր մնաց: Ախտրյանի ջրամբարի ջուրն արդեն հասնում էր այդ շրջան, և մերկ, անմշակ տարածքները անտառապատներ հրաշալի հնարավորություն էր ստեղծվել:

Հետո պիտի կարսում մենք զարմանայինք շատ նրիտասարդներ տեսնելով՝ պարզվեց, որ մի շարք բուհերի մասնաճյուղներ են քաջված սահմանային այս քաղաքում, ուր հիմա 11 հազար ուսանող կա: Փաստերը զուգահեռնելու լրագրողիս սովորությունը պիտի նոյթատետրից »քաղեր« շարունակ բնակիչներից լրվող ու փակվող տների դատարկությունից տխուր խոհենր առաջացնող մեր սահմանային որոշ գյուղների մասին տողը, որ կարսի խանութներից մեկի տիրոջ՝ Մեզար Աղիզուցնելիի խոսքներն են. »Սահմանը, իմ եղբայր, ոչ միայն փշալարով են պահում. սահմանը պահում են մարդով, շատ մարդով«: Նա առանձնակի շնչտեց մարդով քառը:

– Կարսը համարվում է սահմանայի՞ն քաղաք, - հարցոր Մեզարին:

– Սահմանային չհամարվեր այսքան ուշադրություն կդարձնեի՞ն, - պատասխանեց Մեզարը և մտերմական տոնով կրկնեց նախորդ ասածը՝ փշալարի ու մարդու մասին:

»Իմ եղբայր« դիմելածնը հատուկ է քրդերին, և դա անթաքույց մտերմության տանող վարմունք է, որն էլ շարունակություն տվեց մեր գրուցին:

Մեզարը տուներնեն այն »Վարպետությամբ« է ջարդուում, ինչը ձեռք է բնրել մի քանի ամիս Թուրքմենստանում ապրած լինելու շնորհիվ: Նա հիմա կարսում »կարկաս գիտա« ցուցանակով խանութ ունի, որը ճիշտ Վարդանի կամրջի կողքին է՝ բնրդի բարձունքի ստորոտին: Կամուրջն ամեն օր Մեզարի աշքի առաջ է, և որևէ արտառոց քան նա այդ կամրջի հետ կապված չի տնան ու չի էլ փորձել տնան, և հիմա զարմանում է, թե ես ինչ եմ այդպես մանրամասնորեն նկարահանում այդ, իր ասելով, շատ սովորական կամուրջը:

– Այս կամրջով, - ասացի, - Զարենցն է քայլել: Քիչ դենք, - ձեռքս պարզեցի դեպի գնտափով փոփած կիսաքանդ, կիսաքանդ հին թաղամասը, - իր տունն է եղել:

Զարենցին չիմացող Մեզարի հետ այդ թեմայի շարունակությունը որևէ հնոանկար չուներ, և ես կառչեցի նրա առաջին խոսքներից.

– Ի՞նչ նկատի ունեիր, նրբ ասում էիր, թե սահմանը փշալարով չեն պահում:

– Ես ասացի՝ ոչ միայն փշալարով,- շնշտեց Սեղարը,- սահմանամերձ շրջաններում ապրող մարդկանց հոգատարությամբ վերաբերվելը պետական քաղաքականություն է: Տես՝ Ղարսը, (Սեղարը շեշտված Ղ-ով է ասում) մոտ 60 հազար բնակչություն ունի, որի 11 հազարը ուսանողներ են: Մեր կառավարությունը քուինի մասնաճյուղներ է քացել այստեղ, քունջներ հիմնել: Իսկ սահմանամերձ գյուղներում, իմ նորայր, ջրի, հողի, էլեկտրաէներգիայի վարձները զնուց գններով են գանձվում...»

Սեղարը մատների վրա թվարկումը դադարեցրեց՝ խանութ մտած հաճախորդին ճանապարհ դնելու համար:

Ես հիշեցի անցյալ տարվա իմ այցելությունը Տավուշի մարզի Մովսես գյուղ: Սահմանամերձ այդ գյուղը, որ բազում անգամներ է ուժակոծվել, որի ճանապարհները մշտապես զնդակոծումների վտանգի տակ են եղել, միայն աշխարհագրական դիրքով է սահմանամերձ, իսկ իր հանդեպ վերաբերմունքի տեսակետից որևէ առանձնահատուկ ուշադրության արժանանալու պատիվը չի ունեցել ու, ավագ, չունի: Եվ լրագրողիս իրենց դարդերը պատմող բնակիչներն այս նույն Սեղարի նման մատները մենք-մենք ծալելով ասում էին. »Այսր ինչո՞ւ մենք էլ ենք ջրի, հողի վարձները նույն չափով վճարում, ինչպես, ասենք, Արմավիրի մարզի գյուղերի բնակիչներք:«

Սեղարը հաճախորդներով զբաղված էլ չլիներ, ես նրան այս մասին չեմ պատմելու: Չեմ պատմելու նաև Իջևանի Սևար և Այգենիովիտ գյուղերի բնակիչների տարակուսանքի մասին, երբ հողի հարկ են պահանջնել նրանցից, ում սեփականաշնորհած հողերի մի մասը, այսպես ասած, չնզոր գոտում են՝ ականապատված ու անմշակ: Այդ գյուղերի բնակիչների տարակուսած հայացքներն ինձ ուղեկցում էին Կարս գնալու ամբողջ ճանապարհին, երբ քրդաբնակ գյուղերի բոլոր տների կտորներին դրված ափսեատիպ ալեհավաքների վրա իմ ուշադրությունը նկատելով, քուրդ ուղեկիցն ասաց՝ »Պետությունը դրանք անվճար է տալիս սահմանային գյուղերի բոլոր բնակիչներին:« Զուգահեռնելու զանկություն չունեմ, բայց սահմանային գյուղի բնակիչների տարակուսանքին՝ »Մենք, այսր, սահման ենք պահում«, արձագանքն է պեստք:

Զարենցյան մտորումներիս այս թեման ակամայից խառնվեց՝ Կարսում եղած օրերին մենք տեղաբնակներից շատ »խրատներ« էինք լսում սահմանապահապանության մասին, և այդ »խրատներն« էլ մենք-մենք ցուցադրական փաստերով էին համարվում: Այդ ամենը շատ ցավու էր ինձ համար, և ես հնարավորինս խուսափում էի նրանց հետ խոսել մեր սահմանային գյուղերի մասին: Եվ Անհում էլ, Կարսում ու Խգդիրում էլ, պերսներացող պատկեր որպես, շարունակ աչքերիս առաջ էր »խրատող« Սեղարը՝ իր »հորդորով«. »Սահմանը, իմ նորայր, միայն փշալարով չեն պահում, սահմանը մարդո՞վ են պահում, մարդո՞վ:«

Անիին հարևան գյուղի փողոցներով անցնես՝ երեխաները ոտատակ են ընկնում: Ում որ դուր չի գախս այս համեմատությունը, թող նատի Բաղրամյանից Թալին գնացող ավտոբուսը և նայի նույն Կարսի դաշտավայրի հարթությունն ունեցող »մեր կողմից« գյուղերի տներին. քանի՞ բաց դուռ և քանի՞ մարդ կտնանի: Եվ ավտոբուսի մեջ էլ թող փորձի մտաբերներ Գյորենի խոսքները. »Գահերն ու թագավորությունների անկումը ինձ չեն հոգում. այրված գյուղական տունը՝ ահա իսկական ողբերգությունը«: Մոռացվող գյուղի մարդագորկ տունը արդյո՞ք այրված տուն չէ: Եվ մի՞թե նույն մտահոգությունը չպիտի տարածվի սահմանային գյուղերի հանդեպ ունեցած մեր վերաբերմունքի վրա: Լրագրողի միամիտ երևակայությամբ մեր կողմի դատարկ գյուղերում ես ուզում եմ տեսնել փախստականների բազմանդամ ընտանիքներ, որոնք արցախյան պատերազմի հետևանքով ավաստանել էին Երևանի հյուրանոցներում, հանրակացարաններում ու հիմա, պատկերացնենք, որ նրանք լցվում են այդ դատարկ տները, զբաղվում անմշակ հողերով, այգիների խնամքով: Բայց սա ընդամենը լրագրողի երևակայություն է, և փաստն ուրիշ է. 2003 թվականին միգրացիայի վարչության պետ Գ. Եգանյանը պատմում էր, թե փախստականներից 11.500 ընտանիք առաջմ ապահովված չէ բնակարանով: 2008-ին պատկերն այլ էր. ըստ Եգանյանի, այսուհետ ամեն տարի 300 ընտանիք կվերաբնակեցվի սահմանամերձ գյուղերում:

Սա արդեն ուրախալի է:

Ծարունակելի